

տուաւ եւ պատրաստութիւններ տեսաւ . յետոյ՝ հաշիւ պահանջեց չորս խնամակալներէն : — Օրինաւոր եւ իրաւացի պահանջ : — Խնամակալութեան անդամներն անշուշտ պատասխանատու էին ազգին եւ մահաւանդ Լեւոնի առջեւ, քանի որ ի՛ր կողմէ նշանակուած էին անոնք : Եւ ամօթահար մնացին , երբ Լեւոն անոնց երեսը զարկաւ հայկական գանձարանի մասին իրենց ունեցած անհոգութիւնն ու գանձային հարստութեան կողոպտուած ըլլալը : Սակայն ասով չգոհացաւ Լեւոն , այլ նկատելով որ խնամակալները արամազիր չեն ետ դարձնելու գողցուած հարստութիւնը , եւ պատասխանատուութիւնը կը ծանրանայ մասնաւորապէս պարոն Վասիլի վրայ , հրամայեց բանտարկել թէ՛ Վասիլը եւ թէ՛ այս վերջինիս ցուցումով սպանուած կոստանդին Դ-ի կիներ :

Վասիլի յանցանքն աւելի՛ ծանրացաւ , երբ սա ինքզինքն ազատելու համար սկսաւ ուրիշ անմեղ անձեր եւս մատնել : Բայց Լեւոն ներեց այս ամենուն եւ երկու բանտարկուածներուն ազատութիւն չնորհեց :

Այս միջոցներուն էր (1874 սեպտ. 1-5) , երբ Մարգարիտ իշխանուհին երկուորեակ աղջիկ զաւակներու տէր եղաւ (1) որոնց մէկին անուընդ ըրին Մարիամ , իսկ միւսինը յայտնի չէ :

Ծննդագրութիւնէն ետքը կարգն եկած էր թագադրութեան :

Պատրաստութիւններ տեսնուեցան :

Հանդէսը չքեղ եւ շատ փայլուն ընելու համար ամէն տեսակ զոհողութիւնէ եւ ջանքէ չթերացան Հայերը , թերեւս գուշակելով որ հայ սեպհական հողին վրայ կատարուած հայկական պաշտօնական վերջին հանդէսն էր այն . . .

1874 թ. սեպտ. 14-ին(2) Վերացման Խաչի սօնն էր Սսի մայր եկեղեցին , ս. Սոփիայ , լեցուած էր պաշտօնական բարձր անձնաւորութիւններով . ասեղ ձգելու տեղ չկար եկեղեցիին մէջ եւ դուրսը՝ գաւիթը : Գասին մէջ կերեւէին երկու նոր զլուխներ , որոնց ձախ կողմը կանգնած էր Հայոց կաթողիկոսը , իսկ աջ կողմը լատին եպիսկոպոս մը : Այս երկու նոր զլուխներն էին — Լեւոն եւ իր կինը Մարգարիտ , որոնց թագադրութեան եւ օծման արարողութիւնը կը կատարուէր նոյն օրը : Լատին եպիս-

(1) Լեւոնի զաւակներուն վրայ պիտի խօսիմ առանձին գլուխով մը :

(2) Հ. Ալիւան Գարդելի ձեռագրին հետեւելով « 24 սեպտ. » կը գրէ Սխուռանի մեջ , եր. 227 . Եւ սակայն պէտք է կարդալ 14 , վասն զի նոյն տարին Խաչվերացի սօնը պատահած է սեպտ. 14-ին :